

I

ՆՈՔԱ ԼԱԼԻՍ ԵՆ

Նոքա լալիս են դրոնէ-դուռ ընկած,  
 չեղբենի երկրի թռուտ զաւակներ,  
 Թալէս անկանայ ոստերից պոկուած  
 Աւնան ուծասպառ, դրժգոյն տերեւներ...

Նոքա լալիս են... Եւ մենք անտարբեր,  
 Մենք անհոգ որդիք ծիծաղկոտ բախտի,  
 Ո՞հ, լոկ խօսքով ենք նոցա եղբայրներ...  
 «Կու՛սք բաղցածին մանր կը բրբի»...

II

Հ Ե Ր Ի Ք Է

Հերիք է... եղբայր... Հերիք է, որքան  
 Անձնասուր եղած դու անգոր լացին,  
 Ողբացի կեանքդ, սրգուռի նրման,  
 Զուր սպասելով վառ լուսաբացին...

Հերիք է... անբեկ, հաստատուն կամքով  
 Հարթի՛ր քո ուղին—վաղ թէ անագան—  
 Քո հարթած ուղին կը ծածկուի ծաղկով,  
 Ա՛յլ ուղի չունի քո լոյս-ապագան...

Ա. ՆԱՏՈՒՐԵԱՆ